ՀՏԴ : 947.925

Վայոց ձոր. Պատմամշակութային ժառանգության դրվագներ *(հավաքական մենագրություն՝ խմբագրությամբ Տորք Դալալյանի), Եղեգնաձորի երկրագիտական թանգարան, 2021, Երևան, ՀԱԻ հրատ., 296 էջ*:*

Բանալի բառեր՝ Վայոց ձոր, ազգագրություն, բանահյուսություն, հնագիտություն, Արենի, Շատին, Քաջբերունի:

Ներկայացվող հավաքական մենագրությունն ընդգրկում է ավելի քան երկու տասնյակ հետազոտողների ուսումնասիրություններ՝ կապված Վայոց-ձորի մարզի բանահյուսական, ազգագրական, ճարտարապետական, պատմական անցյալի ու ներկայի հետ: Ինչպես գրքի առաջաբանում գրում են ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Պավել Ավետիսյանն ու խմբագիր, բ. գ. թ. Տորք Դալալյանը, «Յուրաքանչյուր հոդված, ըստ էության, կազմում է Վայոց-ձորի պատմամշակութային ժառանգության մի դրվագը, և այդ դրվագները, տրամաբանական շղթայով դրվելով կողք-կողքի ու ամբողջանալով՝ դառնում են իր տեսակի մեջ եզակի կոլեկտիվ մենագրություն, որն իրականացել է տարբեր գիտական հաստատությունների աշխատակիցների միջգիտակարգային հետազոտական ջանքերով» (էջ 12): Այդ գիտական կենտրոններն են՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը (ՀԱԻ), ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը (ԱԻ), Մատենադարան Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտը (ՄՄ), Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ), Հայոց ազգագրության պետական թանգարանը (ՀԱՊԹ), ՀՀ պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայությունը (ՊԱԹՊՄՊԾ), Երևանի ռուսական արվեստի թանգարանը (ԵՌԱԹ), Հայաստանի ազգային գրադարանը (ՀԱԳ), Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը (ՀՊՄՀ), Լոնդոնի Բիրբեքի համալսարանը (ԼԲՀ):



Գիրքը բաղկացած է հինգ մասից (ա. «Վայոց-ձոր. ընդհանուր տեղեկությունները», բ. «Վայոց-ձորի միջնադարյան քրիստոնեական մշակութային ժառանգությունը», գ. «Վայոց-ձորի ոչ-նյութական մշակութային ժառանգությունը», դ. «Վայոց-ձորի հնագիտական ժառանգությունը», ե. «Հաղորդումներ»), որոնք ամբողջանում և դառնում են համալիր աշխատանք՝ լույս սփռելով Վայոց-ձորի պատմության վրա:

Ա. «Վայոց-ձոր. ընդհանուր տեղեկությունները»

Գրքի առաջին մասում զետեղված հոդվածները Վայոց-ձորը հիմնականում քննում են ժողովրդագրական տեսանկյունից, որը, կարծես, հիմք է նախա-

---

* *Ներկայացվել է 21. II. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:*

պատրաստում հետագա հոդվածների երևան գալու համար՝ դառնալով գրքի իմաստաբանական շղթայի առաջին օղակը: Այդ առումով ուշագրավ է բանագետ, բ. գ. թ. Էսթեր Խեմչյանի (ՀԱԻ) «Վայոց-ձոր տեղանվան ստուգաբանական ավանդազրույցները» (էջ 24–30) հոդվածը, որը թեպետ բանագիտական ժանրի ուղղվածություն ունի, բայց միաժամանակ պարունակում է նաև մատենագիտական ու պատմական հարուստ աղբյուրներ (Խորենացի, Գանձակեցի, Մանանդյան և այլք), որոնք էլ ավելի արժանահավատ են դարձնում մարզի անվան ստուգաբանական պնդումները: Հեղինակը մանրամասն քննում է մարզի անվան ծագումը՝ հենվելով մեր նշանավոր պատմիչների հաղորդած տվյալներին, որոնք նա համադրում է առկա ազգագրական-բանագիտական նյութին և հանգում կարևոր եզրահանգումների: «Այսպիսով, Վայոց-ձորի՝ մեզ հասած ստուգաբանական ավանդազրույցների քննությունը ցույց է տալիս, որ դրանց վերջնական ձևավորումը ժամանակագրորեն հանդես է եկել 8-րդ դ. Մոզի երկրաշարժից հետո, ուստի դրանք իրենց նախնական ենթադրյալ տարբերակներից շատ են հեռացել» (էջ 27), – եզրակացնում է Է. Խեմչյանը:

Հետաքրքրական տվյալներ է պարունակում ժողովրդագրության մասնագետ, ազգագրագետ, պ. գ. թ. Համլետ Սարգսյանի (ՀԱԻ) «Վայոց-ձորի բնակչության էթնոժողովրդագրական գործընթացները 1873–1939 թթ.» (էջ 31–45) խորագրով հետազոտությունը, որը փաստական հարուստ նյութի առկայությամբ լույս է սփռում մարզի՝ ավելի քան հարյուր տարվա ժողովրդագրական տվյալների վրա: Ուշագրավ է այն հանգամանքը՝ հեղինակն իր ուսումնասիրության մեջ օգտագործել է ոչ միայն փաստական կարևոր սկզբնաղբյուրներ (մարդահամարի տվյալներ, ազգագրական նյութեր և այլն), այլև մատնանշել է որոշ աղբյուրներ, որոնք ժամանակին (հիմնականում՝ ցարական շրջանում) ոչ ճիշտ տեղեկություններ են հաղորդել: Ամփոփելով իր ուսումնասիրությունը՝ Հ. Սարգսյանը գրում է, որ նշված ժամանակաշրջանում Վայոց-ձորի բնակչության թիվը, որոշ տատանումներով, ավելացել է 1.8 անգամ կամ 80.7 %-ով: Տարեկան միջին աճի տեմպերը 1886–1897 թթ. կազմել են 3.6 %, 1905–1914 թթ. արձանագրվել է միջին տեմպ՝ 11.6 %, իսկ 1926–1939 թթ. առանձնապես բարձր տեմպ՝ 53.3 %: Շատ կարևոր է հեղինակի բերած այն փաստը, ըստ որի՝ հայերն այդ շրջանում կազմել են բնակչության 81 %-ը, այսինքն՝ ճնշող մեծամասնությունը: Այս հոդվածը կարևոր է նաև հարևան թշնամական երկրի հակահայկական քաղաքականության դեմ պայքարի առումով:

Ուշագրավ է պ. գ. թ. Սուսաննա Ադամյանի (ՀԱԻ) «1905–1906 թթ. «Հայ-թաթարական» ընդհարման պատմությունից» (էջ 46–56) ուսումնասիրությունը, որը նորովի է մեկնաբանում անցյալ դարասկզբին Արևելյան Հայաստանում կազմակերպված հայության զանգվածային ջարդերը, որոնք, ինչպես հաստատում են հեղինակի բերած աղբյուրները, հրահրված են եղել Օսմանյան կայսրության կողմից: Հոդվածում նշվում է, որ Բաքվում, Գանձակում, Նախիջևանում և այլուր հայության ջարդերի կազմակերպման համար թուրքական իշխանությունները սկզբում զենք ու զինամթերք են բաժանել հետագայում աղրբեջանցի հորջորջված կովկասյան մուսուլմաններին՝ նախօրոք ամեն քայլը համաձայնեցնելով ավելի վաղ ընտրված պարագլուխների հետ:

Ընթերցելով ուսումնասիրությունը՝ հասկանալի է դառնում, որ այդ ողբերգական անցքերի անպատժելիությունն ավելի ուշ՝ դարավերջին, նոր ցեղասպանություններ և էթնիկ զտումներ ծնեց հայության դեմ Բաքվում, Սումգայիթում, Լեռնային ու Դաշտային Արցախի տարածքներում: Հոդվածագրի եզրակացություն-պնդումը հետևյալն է. պետք է ապավինել սեփական ուժերին, քանի որ «1905–1906 թթ. ընթացքում, որտեղ որ հայերը դիմադրեցին և ինքնապաշտպանություն ցուցաբերեցին՝ ունեցանք քիչ զոհեր և վնասներ» (էջ 53):

Գրքի առաջին մասը եզրափակում է էթնոսոցիոլոգ, պ. գ. դ. Միհրան Գալստյանի *(ՀԱԻ) «Աշխատանքային միգրացիան և սոցիալ-մշակութային փոփոխությունները Վայոց-ձորում» (էջ 57–65) չափազանց արդիական ուսումնասիրությունը: Հեղինակը համակողմանի քննության է ենթարկել հետանկախության շրջանում Վայոց-ձորում տեղի ունեցած միգրացիոն շարժերն ու հանգել եզրակացության, համաձայն որի, միջին հաշվարկով Վայոց-ձորից ամեն տարի հեռացել և չի վերադարձել 391 մշտական բնակություն ունեցող մարդ (էջ 57): Ուսումնասիրողի համար, բացի պետական մարդահամարներից, հարուստ փաստական աղբյուրներ են հանդիսացել նաև տեղում՝ Վայոց-ձորի հինգ գյուղերում (Արենի, Գլաձոր, Ագարակաձոր, Արփի, Աղավնաձոր) բնակիչների հետ 2005 և 2014 թթ. իրականացված թվով 23 հարցազրույցները: Մ. Գալստյանը, հենվելով փաստական նյութի վրա, գտնում է, որ դեռևս XIX դարի երկրորդ կեսից արդեն արտագնացությունը պայմանավորված է եղել աղքատությամբ (էջ 57): Նա գրում է, որ այսօր էլ մարզում արտագնացությունը շարունակում է մեծ ցուցանիշներ գրանցել. «Արենի գյուղից ամեն տարի աշխատանքային արտագաղթի է մեկնում միջին հաշվով 300 մարդ, Գլաձորից՝ 800, Ագարակաձորից՝ 300, Արփիից՝ 300, Աղավնաձորից՝ 400 մարդ» (էջ 58): Այսպիսով, գիտնականը եզրակացնում է, որ աշխատանքային միգրացիան ազդել և ազդում է մարզի բնակչության տնտեսական վիճակի ու սոցիալ-մասնագիտական կառուցվածքի վրա:*

Բ. «Վայոց-ձորի միջնադարյան քրիստոնեական մշակութային ժառանգությունը»

Գրքի երկրորդ մասում անդրադարձ է կատարվել միջնադարում մարզում ստեղծված քրիստոնեական ժառանգությանը, որոնք կարևոր են մի քանի հայեցակետերով: Առաջին ուսումնասիրությունը՝ «Վանքերի և ուսումնական կենտրոնների ծաղկումը Վայոց-ձորում» (էջ 68–77), պատկանում է պատմաբան-արվեստաբան, պ. գ. դ. Կարեն Մաթևոսյանին *(ՄՄ), ով, անդրադառնալով միջնադարյան Վայոց-ձորին, ներկայացնում է այնտեղ տիրող քաղաքական, մշակութային կյանքին և դրանից բխող դրական ու բացասական հետևանքներին: Հեղինակը նախ գրում է Օրբելյան և Խաղբակյան (Պռոշյան) իշխանական տների միջև առկա մրցակցության մասին՝ ընդգծելով նրանց դիրքորոշումները՝ կապված մոնղոլական աշխարհակալության հետ և գավառի տարածքում ունեցած դիրքերը: Կարևոր անդրադարձ է կատարված նաև Վայոց-ձորի մյուս վանքերին ու եկեղեցիներին (Նորավանք, Սբ. Աստվածածին, Արատեսի վանք, Ցախաց քարի վանք, Աղավ անապատ, Քարկոփի վանք, Թանատի վանք, Սբ. Հովհաննես Կարապետի վանք), որոնք, իհարկե, ոչ Գլաձորի ու*

Հերմոնի չափ, բայց բավական դրական ազդեցություն են թողել ժամանակի հայ իրականության վրա:

«Թորոս Տարոնցին՝ Գլաձորի համալսարանի նշանավոր գործիչը» (էջ 78 – 89) ուսումնասիրության մեջ արվեստաբան Նաիրա Նազարյանն *(ԱԻ) անդրադառնում է XIV դարում ստեղծագործած մանրանկարիչ, Գլաձորի համալսարանի սան, Եսայի Նչեցու աշակերտ Թորոս Տարոնցուն: Չնայած մի շարք ուսումնասիրողների (Սիրարփի Տեր-Ներսեսյան, Լիդա Դուռնովո, Արամ Ավետիսյան, Էմմա Կորիմացյան և ուրիշներ) կողմից Տարոնցու թողած ժառանգությունը քննվել է, սակայն, ըստ հեղինակի, այն ցայսօր պատշաճ չի ուսումնասիրվել և կարիք կա հիմնովին ուսումնասիրության: Հոդվածում հեղինակը մանրամասն ներկայացնում է Տարոնցու դերն ու դիրքը Գլաձորի համալսարանում: Գնահատելի են հատկապես քննությունները՝ կապված Տարոնցու՝ Տերունական և Ավետարանիչների պատկերների ստեղծման առանձնահատկությունների հետ: Նա մանրամասն զննության է ենթարկել նաև մանրանկարչի գունապնակը, դրանցով ստեղծված կերպարները, դեմքերը, միջավայրը և դեկորացիան:*

Տիգրան Գրիգորյանի *(ԵՌԱԹ) հետազոտությունը վերաբերում է Վայոց-ձորի Սբ. Աստվածածին (Բուրթելաշեն) եկեղեցու արևելյան ճակատին պատկերված բարձրաքանդակի խորհրդաբանությանը («Ճանկող արծիվը» և «Երկնային Թագավորության» խորհրդանշանները Նորավանքի պատկերաքանդակներում») (էջ 90–100): Հեղինակն անդրադառնում է Նորավանքի վանական համալիրում առանցքային դիրք ունեցող Բուրթելաշեն Սբ. Աստվածածին եկեղեցուն՝ ընդգծելով տեղակայման յուրահատուկ սկզբունքն ու երկհարկ պաշտամունքային կառույցների տիպին պատկանելու փաստը: Մանրամասնորեն ներկայացնում է արևելյան ճակատի պատկերագրական համակարգը, աստղակերպ մարմինների խորհրդաբանություններն ու զուգահեռները, խաչային հորինվածքները: Այնուհետև Եռագոտի քանդակային հարդարանքը մեկնաբանում է աստիճանական հաջորդականությամբ: Երրորդ գոտին, ըստ նրա, խորհրդանշում է «Երկնային Թագավորության» մեծ համապատկերի մաս կազմող «փոքր տիեզերքի» մոդելը: Երկրորդ գոտում պատկերված Խաչի մեծաղիր հորինվածքը խորհրդանշում է «Փրկության» գաղափարը: Իսկ առաջին գոտում «Ճանկող արծվի» պատկերն է, որը եզրափակում է բարձրաքանդակի հորինվածքը (էջ 100): Ուսումնասիրողն ամենաշատն անդրադարձել է այս գոտուն՝ այն դարձնելով ուսումնասիրության հիմնական առանցքը: Հղում անելով Կ. Մաթևոսյանին՝ նշում է՝ արծիվը կերպափոխված հրեշտակն է, որն Ահեղ Դատաստանի ժամին պետք է հափշտակի և երկնային արքայություն տանի հանգուցյալի մարմինը (էջ 95): Հեղինակը մանրամասն ցույց է տալիս հորինվածքի ներդաշնակությունն ու գաղափարական համապատասխանությունը՝ նշելով, որ չկան ավելորդ զարդանախշեր: Այնուամենայնիվ, հոդվածի հիմնական նպատակն արծվաքանդակի խորհրդաբանական քննությունը, բացահայտումն ու տարածման ուղիների փնտրտուքն է արևելաքրիստոնեական արվեստում, որը հաջող սկսել և ավարտել է Տ. Գրիգորյանը:*

«Հոգու փրկության համար մատուցվող պատարագները Վայոց-ձորի վիմական արձանագրություններում և հայ վիպական բանահյուսության մեջ» (էջ 101–108) խորագրով հոդվածում Սիրանույշ-Նռանե Առաքելյանն *(ՀԱԻ)*

անդրադառնում է Վայոց-ձորի վիմական արձանագրություններում առկա հոգու փրկության համար պատվիրված Պատարագի արձանագրություններին, որոնք հեղինակը զուգահեռել է համապատասխան բանահյուսական նյութին: Առաքելյանն անդրադարձել է վիմագիր տեքստերի սոցիալ-մշակութային առանձնահատկություններին, հավատալիքներին և պատկերացումներին, Պատարագի ընկալմանը հայ վիպական բանահյուսության մեջ, կրոնական ծեսերին ու դրանց փոխակերպմանը: Նկատենք, որ հայ վիպական բանահյուսության մեջ բավական ծավալուն ընդգրկում ունեցող այս թեման մշտապես գրավել է բանագետների ուշադրությունը: Այս հոդվածի արժանիքներից մեկն էլ դա է, մանավանդ որ նա աշխատանքին մոտեցել է գիտական բարեխղճությամբ, որոնք առավել հավաստի են դարձնում իր պնդումները: Ուսումնասիրության առավելությունը կարող է հիմք ծառայել հետագա՝ առավել ծավալուն ու երկարատև հետազոտությունների համար:

Ժողովածուի երկրորդ մասն իր «Վայոց-ձորի եկեղեցաշինական ավանդազրույցները և սրբավայրերը» (էջ 109–115) ակնարկով եզրափակում է բանագետ, բ. գ. թ. Է. Խեմչյանը (ՀԱԻ): Այստեղ նա անդրադառնում է Վայոց-ձորի գավառի եկեղեցիների և մյուս սրբավայրերի հետ կապված ավանդազրույցներին, որոնք հիմնականում շոշափում են դրանց շինարարության կամ շինարարության գաղափարի հղման, մղման կամ պատվերի հետ կապված զրույցները: Գավառի բազմաթիվ եկեղեցիների մասին առկա ավանդազրույցները, ինչպես նաև հեղինակի տասնամյակների փորձը թույլ են տվել նրան կատարել համապարփակ ուսումնասիրություն՝ մեկտեղելով բազմաթիվ ավանդազրույցներ, և մեկ օբյեկտիվի տակ առնել մարզի եկեղեցաշինությանն առնչվող բանավոր զրույցները: Է. Խեմչյանն անդրադառնում է Գնդեվանքի, Նորավանքի և մյուս եկեղեցիների ու սրբավայրերի կառուցմանը՝ չմոռանալով նաև սրբավայր-ուխտավայրերը, որոնք նույնպես հավատքի հզոր կենտրոններ են Վայոց-ձորի և, առհասարակ, Հայաստանի բոլոր շրջանների համար:

Գ. «Վայոց-ձորի ոչ-նյութական մշակութային ժառանգությունը»

Գրքի երրորդ մասը ներկայացնում է Վայոց-ձորի բանահյուսական-ազգագրական ժառանգությունը, որը շատ հարուստ է և ուսումնասիրված տարբեր հետազոտողների կողմից: Բայց պետք է նկատի ունենալ՝ ի տարբերություն, օրինակ, ճարտարապետական կոթողների, որոնք մեկ անգամ ստեղծվում են և մնում այնպիսին, ինչպիսին կան, բանահյուսական ժառանգությունն անընդհատ զարգացման ընթացքի մեջ է գտնվում՝ փոփոխվելով, աշխարհագրական տիրույթները մեծացնելով, հաճախ նաև, ցավոք, մոռացվելով: Այդ առումով խիստ հետաքրքրական և արդիական է գրքի այս մասը:

Բանագետներ, բ. գ. թ. Լուսինե Ղռեջյանն (ՀԱԻ) ու բ. գ. թ. Լուսինե Հայրիյանն (ՀԱԻ) իրենց «Վայոց-ձորի բանահյուսական մշակույթը բանագետ-բանահավաքների գրառումներում» (էջ 118–127) ուսումնասիրության մեջ անդրադառնում են XIX դարավերջին և XX դարի կեսերին Վայոց-ձորում բանահավաքչություն իրականացրած բանագետ-բանահավաքների ահռելի աշխատանքին, որոնք կարևոր են եղել ոչ միայն տվյալ ժամանակաշրջանում, այլև՝ այսօր: Հատկապես մեծ ուշադրություն է դարձված տարածաշրջանի, թերևս, առաջին բանահավաք-ազգագրագետ Քաջբերունուն, ով, մասնագիտությամբ լինելով բժիշկ, գրառել և մոռացությունից փրկել է բանահյուսա-

կան մեծաքանակ նյութ, որն այսօր էլ պիտանի է նոր ուսումնասիրություն-ների համար: Անդրադարձ է կատարված նաև անվանի ազգագրագետ-բանա-հավաք Երվանդ Լալայանին, ով բացառիկ կերպար է ոչ միայն հայ բանա-գիտության մեջ, այլև՝ հենց վայոցձորյան բանավոր ժառանգության գրառ-ման ու դասակարգման գործում: Հեղինակների ուսումնասիրությունը վերս-տին ցույց է տալիս Վայոց-ձորի բանավոր մշակույթի կարևորությունն ու ա-ռանձնահատկությունը՝ միաժամանակ մեկ շրջանակի մեջ լույս սփռելով այդ անգնահատելի հարստությունը գրառողների և սերունդներին ժառանգողների վրա:

Բանագետ, բ. գ. թ. Մարինե Խեմչյանի *(ՀԱԻ) ուսումնասիրությունը՝ «Բա-նագետ Սարգիս Հարությունյանի վայոցձորյան բանահյուսական հավա-քածուն» (էջ 128–141) նվիրված է հայ բանագիտության հսկաներից Ս. Հա-րությունյանի՝ Վայոց-ձորում գրառած հավաքածուին: Հեղինակը նախ ընդ-գծում է հայ բանագիտության ասպարեզում նրա ունեցած մեծ ավանդը: Այ-նուհետև գրում է, թե ինչպես է անցյալ դարի 50-ականների վերջին դեռ ասպիրանտ Ս. Հարությունյանը հայտնվել Վայոց-ձորում և զբաղվել բանա-հավաքչությամբ: Շատ կարևոր է այն հանգամանքը, որ հանելուկներով հետաքրքրվող ասպիրանտը չի զլացել գրի առնել նաև բանահյուսական այլ նմուշներ: Հոդվածին առավել արժեք է հաղորդում և այն, որ ուսումնասիրողն աղյուսակների միջոցով ներկայացրել է բանասացների անունները, տարիքը, սեռը, բնակության վայրը և նյութի ժանրը: Այդ հավաքածուն մասնակիորեն ցույց է տալիս անցյալ դարի 50-ականներին Վայոց-ձորում կենցաղավարող բանահյուսական նյութերի պատկերը:*

Զափազանց ուշագրավ ուսումնասիրություն է «Հովհան Օձնեցու վիպա-շարի վայոցձորյան տարբերակն ըստ Քաջբերունու գրառման» (էջ 142–154) հոդվածը, որը կատարել է բանագետ-լեզվաբան, բ. գ. թ. Տորք Դալալյանը *(ՀԱԻ)՝ անդրադառնալով Քաջբերունու «Ճանապարհորդական նկատողու-թիւնք» աշխատությանը և դրանում տեղ գտած, Վայոց-ձորի մարզի Խաչիկ գյուղում բանասաց Թադոսից գրառած՝ Հովհաննես Օձնեցուն վերաբերող պա-տումներին: Ուսումնասիրողը, հենք ունենալով Քաջբերունու գրառած պա-տումնաշարը, անդրադառնում է Օձնեցու՝ որպես ռազմիկ-պատանիների հո-վանավոր ընկալմանը՝ վերլուծելով և մեկնաբանելով Վայոց-ձորում փեսայի գլուխը սափրելու ծիսակատարությունը՝ ընթերցողին ներկայացնելով նաև դրա նշանակությունը: «Ցորենը՝ որպես ազգային ինքնության խորհրդանիշ» ենթավերնագրի ներքո Տ. Դալալյանն անդրադառնում է բանահավաքի կող-մից գրառած «հոռոմների» կողմից հայերին ցորենի հաց թխելու արգելքի մասին՝ հիշատակելով մահամերձ որդու համար հաց խնդրող և «հոռոմ» ջրա-ղացպանից մերժվող պառավի ավանդազրույցն ու Օձնեցու «ներկայութ-յունն» այդ ավանդազրույցում: Հաջորդիվ ներկայացնում է ավանդազրույցի վայոցձորյան տարբերակը, որտեղ նա նկարագրվում է որպես ոսկեփայլ մո-ռուքով մարդ: Այնուհետև հաջորդաբար անդրադառնում է ոսկու և ոսկեփայլ մորուքի խորհրդանիշին, նրա՝ «թուղթ ու գիր» անելու կարողությանը, «հո-ռոմների» դեմ կռվում նշանակած արաբ հրամանատար կարմրախաչ Ալուն ու խաչանիշ թրին, կամրջի մոտիվին և խորհրդավոր կամրջի վրա յոթ հայ մարդու չզոհաբերման խնդրի լուծմանը: Հետաքրքրական է նաև Տ. Դալալ-*

յանի՝ գլխի մազափնջի խորհրդաբանական ընկալման վերլուծությունը: Ուսումնասիրողը նաև սահմանում է այդ սովորույթի աշխարհագրությունը՝ Հունաստանից մինչև Իրան, անդրադառնում թեման ուսումնասիրած հայ և օտարազգի ուսումնասիրողներին, «հոռոմների» եպիսկոպոսներին պղնձի մեջ խաչելու մոտիվին՝ այն համեմատելով Լոռիում գրառված մի պատմի հետ, որում Հունաց պատրիարքն էր սպառնացել պղնձի մեջ եռացնել հենց իրեն: Հոդվածում ուսումնասիրողը նաև ներառել է Քաջբերունու գրառած Օձնեցու և արաբների դաշինքի մասին առկա ավանդազրույցը, ըստ որի՝ ամեն հայ հարկատու էր խալիֆին, իսկ արաբներն անցնելիս, եթե քնած հայ տեսնեին, պետք է իրենց հագուստի քղանցքով ստվեր գցեին նրա վրա, մինչև արթնանար: Ի պատասխան դրա՝ հայերը պարտավոր էին փողոցում արաբի հանդիպելիս դուրս գալ ճանապարհից և գիջել նրան՝ ի պատիվ արաբական ցեղի (էջ 150): Այս ավանդազրույցը շատ հետաքրքրական ու արժեքավոր է, մանավանդ՝ ժողովրդական մտածողության տեսանկյունից, քանի որ քնած հայերին ստվերելու դրվագը, թվում է, մի տեսակ բանահյուսական սփոփանք է, իղձ, ժողովրդի հավաքական երազանք, որը ժամանակին ավելացվել է բուն տարբերակին՝ երևի մեղմելու համար արաբների հանդեպ մեր հարկային պարտավորությունների պատիվ չբերող դրվագը, որը, ցավոք, իրականություն է: Այսպիսով՝ Տ. Դալալյանը նոր լույսի տակ շահեկան քննության է ենթարկում Քաջբերունու՝ Օձնեցուն վերաբերող վայոցձորյան պատումնաշարը՝ բանահավաքի նյութը համեմելով արժանահավատ տեսակետներով և գիտական վերլուծություններով:

Բանագետ, բ. գ. թ. Նվարդ Վարդանյանը *(ՀԱԻ) իր «Բանահյուսական ժամանակակից գրառումներ Զանգակատուն գյուղից» (էջ 155–161) հոդվածում ներկայացնում է Վայոց-ձորի մարզում գտնվող Զանգակատուն գյուղից 2019 թ. գրառած բանահյուսական նյութերը, որոնք կարևոր են ժողովրդական բանավոր գրույցների հանդեպ ունեցած ժամանակակից ընկալումներն ու այդ գրույցների կրած փոփոխությունները պարզաբանելու նպատակով: Բանասաց Ռաֆիկ Կարապետյանից Ն. Վարդանյանը գրի է առել երեք ավանդազրույց, որն անվանել է «գյուղի երեք ավանդություններ»: Առաջինը պատմում է Սևաչյա լճի անվան ստուգաբանության մասին, երկրորդը՝ «Շահկուլի դև» վերնագրով պատմությունն է՝ սատանայի հանդեպ հյուսված սնահավատության հետ կապված, երրորդը՝ «Ներշնչանքի քարայր»-ի շուրջ հյուսված նյութը, ըստ որի՝ այնտեղ սատանաներ են ապրում, և տգեղ նորածինների ծննդկան մայրերը երեխաներին դնում են քարայրի մուտքի մոտ, որպեսզի սատանաներն իրենց «տգեղացրած երեխաներին գեղեցկացնեն»: Սա, նկատում է հեղինակը, հիշեցնում հնագույն՝ Արտավազդ արքայի մասին Խորենացու պատումը (էջ 156–157): Այնուհետև ներկայացված են տարատեսակ զվարճախոսություններ. հետաքրքրական են «Սրամիտ հերոս», «Սրամիտ երեխա», «Ժամանցասեր երիտասարդների եոյակ» ենթավերնագրերով զետեղված նյութերը:*

«Վայոցձորցիների տոնածիսական մշակույթը» (էջ 162–181) հոդվածում ազգագրագետ, պ. գ. դ. Սամվել Մկրտչյանը *(ՀԱԻ) ներկայացնում է մարզի տարածքում վերջին հարյուրամյակի ընթացքում կենցաղավարող տոները և ծիսական արարողությունները՝ անհրաժեշտության դեպքում դրանք համեմա-*

տելով ավելի վաղ շրջանների հետ՝ հերթականությամբ անդրադառնալով Նավասարդի, Սբ. ծննդյան, Զրօրհնեքի, Սբ. Սարգսի, Տեառնընդառաջի, Բարեկենդանի, Մեծ Պասի, Միջինքի, Ծաղկազարդի, Զատկի, Համբարձման, Վարդավառի, Սբ. Խաչի, Սբ. Աստվածածնի ավետման տոներին՝ նկարագրելով դրանց վայրոցձորյան իրացումները, ընդգծելով տեղացիների ընտանեկան, միջհամայնքային և արտահամայնքային հարաբերությունները, նիստուկացը, աշխարհայացքը: Հատկապես կարևոր է խորհրդային շրջանը. հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես այդ ժամանակաշրջանում՝ կապված պետական քաղաքականության հետ, փոխվեցին տոների տարածման մասշտաբները, և թե ինչպես աստիճանաբար մարդկանց կենցաղ ներխուժեցին «քաղաքական կամ միտինգային բնույթի տոները» (էջ 167): Ուսումնասիրությանն առանձնապես կշիռ են հաղորդում հեղինակի կազմած աղյուսակները, որոնք ներկայացնում են մարդի բնակչության տոնական և կրոնական վարքագծերն ըստ սեռերի, տարիքի, կրոնական ցենզի: Հոդվածը հող է նախապատրաստում հետագա՝ առավել մասշտաբային հետազոտությունների համար:

Ազգագրագետ Անժելա Ամիրխանյանի *(ՀԱԻ) «Հավաքչական մշակույթը Վայոց-ձորում (ավանդույթ և արդիականություն)» (էջ 182–190) ուշագրավ հոդվածում հեղինակն ուսումնասիրել է Վայոց-ձորում վայրի բույսերի հավաքչությանն ու խոհանոցում կիրառությանը: Ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել 2019 թ. Արենի, Գլաձոր, Ռինդ, Քարագլուխ, Զիվա գյուղերում և Ջերմուկ քաղաքում հավաքված դաշտային նյութերը: Ա. Ամիրխանյանն անդրադառնում է բույսերի հավաքչական շրջանին, այնուհետև՝ դասակարգում դրանք՝ առաջնային և երկրորդային նշանակության: Հավաքչական աշխատանքը դիտարկված է նաև տոնածիսական համակարգում: Առանձին-առանձին ուշադրություն է դարձված բոխու, նվիկի հավաքչությանը, ամփոփ ներկայացված են բույսերի վերամշակման, մրգերի և հատապտուղների, համեմունքների հավաքչության եղանակները: Ուշադրության են արժանի նորամուծությունների նկարագրությունները հավաքչական մշակույթում: Ընդգծված է նաև Ջերմուկ քաղաքի առողջարանային նշանակությանը: Հոդվածն առանձնանում է հատկապես նրանով, որ նման ուսումնասիրությունները շատ չեն, և մանավանդ այսօր, երբ հարևան թշնամական պետությունը նույնիսկ այդ ոլորտում ցանկանում է սեփականացնել հայկականը, նման աշխատանքները ոչ միայն կարևոր են, այլև անհրաժեշտ, որպեսզի դրանք հրատարակվեն նաև այլ լեզուներով:*

Գրքի երրորդ մասը եզրափակվում է ազգագրագետ, պ. գ. թ. Նիկոլ Մարգարյանի *(ՀԱԻ) «Եղեգնաձոր քաղաքի լեզվական լանդշաֆտը՝ ըստ արդի էրգոնիմների գործառութային վերլուծության» (էջ 191–205) հոդվածով, որում քննության են առնված ձեռնարկությունների անվանումները: Հոդվածի հիմքում ընկած են 2017 թ. Եղեգնաձոր և Վայք քաղաքներում իրականացված ուսումնասիրությունները: Հետազոտելով հինգ տասնյակից ավելի ձեռնարկությունների անվանումներ՝ հեղինակը համադրել է նաև խորհրդային և հետխորհրդային առաջին շրջանի տվյալների հետ՝ ստեղծելով բավական հետաքրքրական ու մտորումների տեղիք տվող փաստական շղթա: Ընտրված ձեռնարկությունները տարբեր են՝ բանկեր, գեղեցկության սրահներ, ռեստորաններ, սրճարաններ, ճաշարաններ, ծաղկի վաճառակետեր, դեղատներ և*

այլն: Հեղինակը խնամքով պատրաստված աղյուսակների միջոցով ընթերցողին է ներկայացնում այդ ձեռնարկությունները երեք դասակարգմամբ. ա) որպես հարաբերականորեն բարձր ինտենսիվությամբ առերևույթ անվանումներ ունեցող խումբ, բ) հարաբերականորեն միջին ինտենսիվությամբ առերևույթ անվանումներ ունեցող խումբ, գ) հարաբերականորեն ցածր ինտենսիվությամբ առերևույթ անվանումներ ունեցող խումբ: Այնուհետև անդրադառնում է անվանումների՝ գործունեության հետ ունեցած առնչությանը, անվանումներին՝ ըստ լեզվական գրությունների, ձեռնարկությունների գործունեության մանրամասներին՝ ըստ լեզվական գրառումների: Գիտական այս մոտեցումը, կարելի է ասել, նոր է և արժանի համակ ուշադրության ու շարունակական զարգացման:

Դ. «Վայոց-ձորի հնագիտական ժառանգությունը»

Գրքի չորրորդ մասն ընդգրկում է Վայոց-ձորի հնագիտական ժառանգության այն բաղան, որն ուսումնասիրողները հայտնաբերել են տարբեր տարիներին կատարված պեղումների ժամանակ: Դրանց կարևորությունը հատկապես այն է, որ հենց այդ պեղածներն են հետագայում հանդրվանում թանգարաններում և տեսողական ընկալմամբ մարդուն ծանոթացնում տվյալ ժամանակաշրջանին: Ընդգրկման թեմաները ձգվում են հնագույն ժամանակներից մինչև միջնադար:

Այս կարևորագույն բաժինը բացվում է հնագետներ, պ. գ. դ. Հայկ Ավետիսյանի (ԵՊՀ), պ. գ. թ. Արտակ Գնունու (ԵՊՀ), պ. գ. թ. Արսեն Բոբոխյանի (ՀԱԻ), Լևոն Մկրտչյանի (ՊԱԹՄՊԾ), Հենրիկ Դանիելյանի (ՀԱԻ) և Գագիկ Սարգսյանի (ՀԱԻ) «Արտավան և Գոմք գյուղերի հնագիտական լանդշաֆտը» (էջ 208–222) հետազոտությամբ: Գիտնականների խումբն ուսումնասիրության ընթացքում պարզել և վերահաստատել է նշված գյուղերի հնագիտական գոտիներում արդեն հայտնի հուշարձանները՝ հիմնական հենք ունենալով գիտարշավներում հավաքված նյութը: Անդրադարձել են նախ ուսումնասիրվող տարածքներում նախկինում աշխատած գիտնականներին, համապարփակ ներկայացրել տարածքի պատմությունը՝ բազմաթիվ փաստեր իրար կողքի դնելով և ստանալով արժանահավատ ու հետագայի համար արդեն որպես պատրաստի աղբյուր հանդիսացող եզրահանգումներ: Բացի գիտական վերահաստատումներից, գիտախումբն Արտավան գյուղի «Անդրանիկի բերդ» կոչվող վայրում նկարագրել է առայժմ չհետազոտված աշտարակ և կիկլոպյան ամրոց: Ուշագրավ է Գոմք գյուղում հայտնաբերված կոթողը, որն էականորեն տարբերվում է Հայաստանում մինչ այժմ հայտնաբերված ցից քարերից:

Հնագետ Դիանա Զարդարյանը (անկախ հետազոտող) «Արփա գետի հովտի բնակչության խեցեգործական ավանդույթներն ուշ պղնձի-քարի դարում՝ ըստ Արենի-1 քարայրի պեղումների» (էջ 223–230) հետազոտության մեջ ներկայացրել է 2007–2013 թթ. պեղված Վայոց-ձորի մարզի Արենի-1 քարայրի հարուստ հնագիտական նյութերը, դրանց նշանակությունը, օգտագործման եղանակները՝ լույս սփռելով հնագույն ժամանակներում մարզում տիրող կենցաղ-սոցիալական վիճակի վրա: Նկարագրելով Արենի-1 քարայրի աշխարհագրական դիրքը՝ հեղինակը հերթականությամբ ներկայացնում է պեղումների ժամանակ հայտնաբերված և անխաթար վիճակում մեզ հասած մշակութային երեք հորիզոնները (էջ 223), որոնք համապատասխանաբար

թվագրում է մ. թ. ա. 3700–3400, 4000–3800, 4300–4000 թթ.: Ուսումնասիրողը հիշատակում է նաև հայտնաբերված ամենակարևոր նմուշները՝ կաշվից պատրաստված ամբողջական կոշիկ (առաջին հորիզոն), քարե սանդ ու ծեծիչ (երկրորդ հորիզոն), փայտե գդալ, մեխ (երրորդ հորիզոն) և այլն: Այնուհետև տալիս է քարայրում գտնվող խեցեղենի տեխնիկական և ձևաբանական բնութագրերը՝ ըստ վերը նշված հորիզոնների: Դ. Զարդարյանն ապացուցում է, որ դեռևս վաղնջական ժամանակներում Հայկական լեռաշխարհում մշակույթը զարգացած է եղել:

Հնագետներ, պ. գ. թ. Աստղիկ Բաբաջանյանն *(ՀԱԻ) ու մ. գ. թ.* Քեթրին Ֆրանկլինը *(ԼԲՀ) «Միջնադարյան Արփա՝ քարավանային ճանապարհների խաչմերուկին» (էջ 231–249) ուսումնասիրությամբ անդրադարձել են հինավուրց Արփա գյուղի պատմությանը՝ 2016 թ. «Մետաքսի ճանապարհի հնագիտական հետազոտություն Վայոց-ձորում» նախագծի շրջանակում իրականացված պեղումների արդյունքների հիման վրա ցույց տալով Արփա գյուղատեղիի՝ միջնադարում ունեցած նպաստավոր դիրքը, քարավանային նշանակությունն ու դրանից բխող վարչատնտեսական շահերը: Հեղինակները նախ ներկայացնում են Հայաստանի տարածքով անցնող «Մետաքսի ճանապարհը», տվյալ ժամանակաշրջանի քաղաքական դասավորությունն ու տրանսպորտային հաղորդակցությունների վիճակը՝ այդ մեծ խաչմերուկների կենտրոն դիտարկելով Արփա բնակավայրը: Զատ-զատ ներկայացված են նաև այլ գտածոները՝ մետաղյա օղակ, պայտ, ապակե անոթի բեկոր, ուլունքներ և այլն: Ուսումնասիրությանը կցված են գտածոների բազմաթիվ լուսանկարներ ու քարտեզներ:*

Հնագետ Տիգրան Ալեքսանյանը *(ՀԱԻ) «Դիտարկումներ Վարդանանքի վայոցձորյան հուշարձանների շուրջ» (էջ 250–259) խորագրով ուսումնասիրության մեջ քննում է Վարդանանց պատերազմին վերաբերող պատմիչ Ստեփանոս Օրբելյանի այն հիշատակությունը, որ ճակատամարտից հետո հայոց մի զորաջոկատ նահանջելով՝ փորձել է հասնել Արցախ: Բայց պարսից զորապետ Ամիաշխուդայի գլխավորած ջոկատը հետևել է նրանց, որի արդյունքում հայերի ու պարսիկների միջև չորս ճակատամարտ է տեղի ունեցել: Հեղինակը հնարավորինս մանրամասն տեղորոշում է այդ մարտերի հավանական վայրերը: Նա նյութին կցել է քարտեզներ՝ միաժամանակ ցույց տալով նահանջող հայոց զորքի ճանապարհի ընթացքը: Տ. Ալեքսանյանը նշում է, որ այն բոլոր վայրերում, որտեղ ճակատամարտեր են տեղի ունեցել, հետագայում վկայարաններ են կառուցվել: Հեղինակը փորձում է նաև ճշգրտել այդ վկայարանների տեղերը՝ առաջ քաշելով Քյոչկ ամրոցի (Սեդրակ Բարխուդարյանի պնդումն է) Շատին–Եղեգիս ճանապարհի մոտակայքում գտնվող եկեղեցու (տեղացիներն անվանում են «Թաք ինգյոզ»՝ միայնակ ընկուզենի) և Ոստինք ու Արտաբույնքից գյուղերի սահմանագլխին՝ Արտաբույնքից արևմուտք՝ գյուղի գերեզմանատան հարևանությամբ գտնվող տարբեր մաշվածության քարեր ունեցող միանավ սրահով եկեղեցու տարբերակները: Նա գրում է, որ հուշարձանները հնագիտական ուսումնասիրությունների չեն ենթարկվել, և այդ առումով դժվար է միանշանակ եզրահանգումներ կատարելը: Հոդվածում հեղինակը հարցադրում է կատարում՝ չորրորդ ճակատա-*

մարտից հետո ի՞նչ տեղի ունեցավ հայոց զորքերի հետ, բոլորը զոհվեցի՞ն, թե՞ մի մասին հաջողվեց, այնուամենայնիվ, հասնել Արցախ:

Ե. «Հաղորդումներ»

Գրքի վերջին՝ հինգերորդ մասում զետեղված հաղորդում-ուսումնասիրությունները ներկայացնում են Վայոց-ձորի թանգարանային, գրադարանային ու հուշարձանային մշակույթի, դրանց զարգացման միտումները:

«Վայոց-ձորի մշակութային ժառանգության մասունքներ ՀԱՊԹ հավաքածուում և վայոցձորյան տարազի ու սովորույթների առանձնահատկությունները» (էջ 264–273) խորագրով հաղորդմամբ ազգագրագետ, պ. գ. թ. Ավետանա Պողոսյանը *(ՀԱՊԹ, ՀԱԻ) նախ ներկայացնում է Սարդարապատի Հայոց ազգագրական պետական թանգարանի կազմակերպած ազգագրական արշավները և դրանցում տեղ գտած վայոցձորյան նմուշները, որոնք չափազանց կարևոր են ոչ միայն տեղի բնակչությանը գիտականորեն սպասարկելու առումով, այլև աշխարհի տարբեր կողմերից պատմությամբ և ազգագրությամբ հետաքրքրվող զբոսաշրջիկների ուշադրությունը Հայաստանի վրա սևեռելու նպատակով: Հեղինակը գրում է թանգարանային կարևոր նմուշների մասին՝ թեմայի կենտրոնում պահելով վայոցձորյան տարազի առանձնահատկություններն ու կրման սովորույթները: Անչափ հետաքրքրական են հատկապես դրանց գունային գամման, կրման ձևերը, չափերը, որոնք նույնպես խոսում են տվյալ ժամանակաշրջանի մարդու զարգացվածության և ընկալումների մասին:*

«Երկրագիտական թանգարանների դերը տարածաշրջանի զարգացման գործում (Եղեգնաձորի երկրագիտական թանգարանի օրինակով)» (էջ 274 – 281) հաղորդման մեջ թանգարանագետ, պ. գ. թ. Լիանա Գևորգյանը *(ՊԱԹՊՄԾ) նախ քննում է թանգարան եզրույթի նախկին ու ներկա ընկալումները, ապա անդրադառնում դրանց՝ համայնքի բնակիչների վրա ունեցած ազդեցությանը՝ նշելով, որ, բացի ժամանակից, հանրությունը նույնպես ներգործություն է ունենում թանգարանների զարգացման գործում: Խոսելով առհասարակ երկրագիտական թանգարանների մասին՝ ուսումնասիրողը ներկայացնում է Եղեգնաձորի երկրագիտական թանգարանի ընդհանուր նկարագիրը, անդրադառնում այնտեղ պահվող բազմաթիվ ցուցանմուշներից որոշներին, նշում դրանց առանձնահատկությունները՝ կարևորելով թանգարանի դերը Հայաստանի թանգարանային ցանցում:*

«Հուշարձանը և համայնքը Մետաքսի ճանապարհին. Հայաստանյան պրակտիկան և հեռանկարները՝ Արենի, Շատին, Եղեգիս գյուղերի օրինակով» (էջ 282–287) հաղորդման մեջ մշակութաբան Ջուլիետա Գրիգորյանը *(ԵՊՀ) քննում է հուշարձանի և համայնքի միջև եղած կապը, համայնքի ցուցաբերած մոտեցումը հուշարձանին: Հաղորդումը պատրաստվել է երեք գյուղում՝ Արենիում, Շատինում, Եղեգիսում կատարված հետազոտությունների հիման վրա: Հիմնական նպատակը՝ հնագիտության՝ հանրային կյանքի վրա ունեցած դերի պարզաբանումն է, և հակառակը՝ հանրության՝ հուշարձանի ու համայնքի պահպանության գործում ունեցած գործառույթների լուսաբանումը: Հենց այդ առումով էլ ուսումնասիրվել են վերը նշված գյուղերը: Արծարծվում են նաև Մետաքսի ճանապարհին գտնվող հուշարձանների կարևորությունը:*

Գրադարանագետ Մհեր Ղազինյանի (ՀԱԳ) «Վայոց-ձորի մարզի գրադարանները. անցյալը, ներկան ու ապագան» (էջ 288–294) հաղորդմամբ ամփոփվում է հինգերորդ մասը, այդպիսով՝ նաև ամբողջ գիրքը: Հոդվածում հեղինակն անդրադարձել է Վայոց-ձորի մարզի գրադարաններին՝ համեմատելով անցյալն ու ներկան՝ շատ կարևորելով Հայաստանի ազգային գրադարանի աշխատակից Մհեր Ղազինյանի՝ ներկային ու ապագային վերաբերող դիտարկումները՝ կապված գրադարանային մշակույթի հետ: Հաղորդման գիտական կառուցվածքին նպաստել են ոչ միայն հարուստ փաստական նյութերը, այլև ուսումնասիրողի՝ խնամքով կազմած աղյուսակները, որոնք ավելի տեսանելի են դարձնում տվյալները՝ պատկերելով մարզի գրադարանային համայնքի քարտեզը: Հետազոտողը ներկայացնում է մարզային՝ 2020 թ. դրությամբ Վայոց-ձորում գործող և չգործող գրադարանների ցանկը, այնուհետև՝ դրանց հիմնական ցուցանիշները:

Այսպիսով, սույն հավաքական ժողովածուի՝ ավելի քան երկու տասնյակ հեղինակները մասնիկ առ մասնիկ համատեղում, ի մի են բերում և ամբողջացնում Վայոց-ձորի մարզի չոչափելի ու անչոչափելի ժառանգությունը՝ հնագիտական, ճարտարապետական, ազգագրական և բանահյուսական: Կարծում ենք՝ էապես հաջողված աշխատանք է, քանի որ գրեթե բոլոր գլուխները, թեպետ գրված են անցյալի մասին, բայց ներկայացվել են ներկայի լույսի տակ, որը մտածված քայլ է դեպի ապագան: Բացի գիտական լուրջ արժեքից, ժողովածուն նաև կարող է քաղաքական փաստաթուղթ դառնալ Ադրբեջանի վարած հակահայ քարոզչության ու զեղծարարությունների դեմ:

ԳԵՎՈՐԳ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության տեսության և պատմության բաժնի ավագ լաբորանտ: Գիտական հետաքրքրությունները՝ հայ բանահյուսություն, ազգագրություն, XVIII–XIX դդ. հայ գրականություն: gyulumyan1910@mail.ru